ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ,

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊԱՐՈՆ ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆԻՆ

ԴԻՄՈՒՄ

Դիմումատու

Ֆիզիկական անձի անուն, ազգանունը կամ իրավաբանական անձի անվանումը (լիազորված անձի անուն, ազգանունը) Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանության հ.

Գործունեության հասցե Վարդանանց 3ա շեն. 367 սենյակ

Հեռախոսահամար(ներ) 010583788

Էլեկտրոնային փոստի հասցե(ներ) azmen@taxpayer.am

Դիմումի առարկան

Ներկայացնելով սույն դիմումը՝ հայտնում եմ, որ ցանկանում եմ ընդգրկվել ՀՀ արդարադատության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում: Այդ կապակցությամբ սույն դիմումին կից ներկայացվում է՝

☑ Կանոնադրություն,

☑ Համապատասխան ոլորտում մասնագիտական փորձառության առկայությունը հավաստող փաստաթղթեր,

☑ Ոլորտին առնչվող հրապարակումներ,

☑ Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության պայմանագրեր,

☐ Նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբերի և հանձնաժողովների աշխատաքներին մասնակցությունը հիմնավորող փաստաթղթեր,

☑ Կազմակերպության կողմից լիազորված անձ լինելու փաստը հաստատող փաստաթուղթ: Հավաստում եմ, որ տվյալ պահին չեմ ստանում ֆինանսավորում և դրամաշնորհ ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

Դիմող՝ Արտակ Զեյնալյան «17» 04 2019թ

Հանձնվեց Հասարակական խորհրդի Գրասենյակ մուտքագրման համար 13430-19 18.04.19

Կազմված է 17.04.2019թ և բաղկացած է 1 թերթից

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

Ես՝ «Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանության» հասարակական կազմակերպության (ՀՎՀՀ՝01245294 գրանց. համար 271.110.03713. հասցե՝ Վարդանանց 5ա շ. 367 տարածք) նախագահ՝ Արմեն Հարությունի Եսոյանս (անձնագիր՝ AK0630917, տրված 14.10.2010թ 001-ի կողմից, բնակության վայր՝ ք. Երևան Լ. Լեփսուսի 2շ. 21 բն.,) լիազորում եմ Արթուր Չերչինյանին (նույն.քարտ 005133228. , տրված 20.05.2014-ին 005-ի կողմից, ծանուցման հասցե՝ Վարդանանց 5ա 367 տարածք),որ նա կազմակերպության անունից հանդես գա ՀՀ Արդարադատության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում, մասնակցի հանձաժողովի կողմից կազմակերպված նիստերին, նիստերի օրակարգին առնչվող հարցերի վերաբերյալ հայտնի իր դիրքորոշումները, ստանա նիստերի վերաբերյալ ծանուցումներ, ինչպես նաև խորհրդի գործունեությանը առընչվող այլ տեղեկատվություն:

Լիազորագիրը տրվում է 2 տարի ժամկետով:

Լիազորող՝ Արմեն Եսոյան

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ОБЩЕСТВЕННАЯ ОРГАНИЗАЦИЯ ЗАЩИТЫ ПРАВ НАЛОГОПЛАТЕЛЬЩИКОВ И ПРЕДПРИНИМАТЕЛЕЙ
NON-GOVERNMENTAL ORGANIZATION OF TAX-PAYERS AND BUSINESSMEN RIGHTS PROTECTION
հասարակական կազմակերպություն
общественная организация
non-governmental organization
00867551



I<ARM0051332282<<<<<<<<<<<<<<<
8102070M2405207ARM<<<<<<<<<<<2
CHERCHINYAN<<ARTUR<<<<<<<<<<<<

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ ԱՌ 2017-09-25

«ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ »
Հասարակական կազմակերպություն (ՀԿ)

Գրանցման համար	211.171.05042
Հիմնադրման տարի	2009
Գրանցման ամսաթիվ	2009-04-21
Գործունեության ժամկետ	Անժամկետ
Կարգավիճակ	Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	39327711
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	00867551
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	47175042
Էլ. փոստ	armen@taxpayer.am
Կայք	taxpayer.am

Գտնվելու վայրը

Հասցե	ՎԱՐԴԱՆԱՆՑ Փ. 5Ա / Տ / 367 ԿԵՆՏՐՈՆ 0010 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
Հեռախոս	(10)583788

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն	Նախագահ
Անուն Ազգանուն	ԱՐՄԵՆ ԵՍՈՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ
Անձնագրային տվյալներ	AP0590358 2016-10-04 007
Հասցե	Յ. ԼԵՓՍԻՈՒՍԻ Փ. / Շ / 2 / ԲՆ.21 ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ 0035 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ-ՔԱՂՎԱԾՔ ԹՎ. 2017-09-22
«ՀԱՐԿ ՎԱՃԱՌՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ »
Հասարակական կազմակերպության (ՀԿ)

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխությունների

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
2012-01-24	**Կանոնադրության թվայնացում**
2017-09-25	**Իրավաբանական հասցեի փոփոխություն** **Պաշտոնական կայքի մասին տվյալների փոփոխություն** **Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)** **Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխություն**

Քաղվածքը տրամադրող՝ _____ Լալա Ներսեսյան
ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ 25-09-2017

05

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

«13 »սեպտեմբերի 2017 թ-ի

հիմնադիր ժողովի որոշմամբ

Նախագահ՝ Արմեն Եղոյան

Տպագրված է ընդամենը 2 օրինակ

Օրինակ -1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«21» ապրիլի 2009 թ.

Գրանցման թիվ 211.171.05042

ՀՎՀՀ՝ 00867551

21.04.2009 թ. գրանցված կանոնադրության թիվ -001-2 փոփոխությունը գրանցված է ՀՀ Իրավաբանական Անձանց Պետական Ռեգիստրի Գործակալության Կողմից

«25» 09 2017թ

«ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

. 2017 թ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.

1. «Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանության » հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և (կամ) իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

2. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը և հաշվետվողականությունը:

3. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

4. Կազմակերպության հայերեն լրիվ անվանումն է՝ «Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանության» հասարակական կազմակերպություն:

5. Կազմակերպության ռուսերեն լրիվ անվանումն է ՝ Общественная Организация защиты прав налогоплательщиков и предпринимателей:

6. Կազմակերպության անգլերեն լրիվ անվանումն է `Non-governmental Organization of Tax-Payers and Businessmen Rights Protection

7. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք.Երևան, Վարդանանց փ 5 ա, 367 տ., հեռախոս՝ +37410583788, էլ. հասցե՝ armen@taxpayer.am:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

8. Կազմակերպության գործունեության առարկան է օրենսդրությամբ սահմանված կարգով հարկ վճարողների և գործարարների, ինչպես նաև սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության իրականացումը:

9. Կազմակերպության նպատակներն են՝

- ՀՀ հարկ վճարողների և գործարարների, ինչպես նաև սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության օժանդակություն.
- ՀՀ հարկ վճարողների և գործարարների, ինչպես նաև սպառողների իրավագիտակցության բարձրացման և ՀՀ-ում հարկային մշակույթի ձևավորման օժանդակություն.
- Պետական իշխանության և համայնքային մարմինների կողմից պետական բյուջեի ձևավորման և դրա ծախսային մասերի նկատմամբ հասարակական վերահսկողության կազմակերպում և օժանդակություն.
- Պետական տարբեր մարմինների կառավարման արդյունավետության բարձրացում.
- Հասարակական օժանդակություն պետության կողմից հարկաբյուջետային, ֆինանսատնտեսական քաղաքականության կազմակերպման ժամանակ և օժանդակություն այդ քաղաքականության հասարակական վերահսկողության միասնական համակարգ ստեղծելու համար.
- Հասարակության ներգրավումը իրավական և հումանիտար բարեփոխումների նախագծերին և ծրագրերին.
- Աջակցություն ցուցաբերել հարկ վճարողներին, գործարարներին ու սպառողներին օրենքով սահմանված կարգին համապատասխան վարելու իրենց հաշվապահական հաշվառումը, ժամանակին ներկայացնելու իրենց գործունեության առանձնահատկությամբ պայմանավորված հարկային և ֆինանսական հաշվետվությունները.
- Հարկ վճարողների և հարկային մարմնի միջև առաջացած վեճերի լուծման օժանդակություն.
- Հարկ վճարողների, գործարարների, սպառողների և պետական մարմինների միջև առաջացած վեճերի լուծման օժանդակություն և աջակցություն նրանց իրավունքների պաշտպանության ոլորտում:

10. Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար կազմակերպությունը համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների,

միջազգային և օտարերկրյա համանման կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ կազմակերպությունների հետ:

11. Կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

12. Կազմակերպության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած ցանկացած ֆիզիկական անձ, ինչպես նաև իրավաբանական անձ, որը ընդունում է Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նպատակները և ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը:

13. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության գործադիր մարմնին՝ Նախագահին:

14. Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Նախագահը՝ սույն Կանոնադրության հիման վրա:

15. Կազմակերպության անդամը ցանկացած ժամանակ ազատ է դուրս գալու Կազմակերպությունից: Կազմակերպության անդամությունից հեռացումը կատարվում է Նախագահի որոշմամբ:

16. Կազմակերպության այն անդամը, որը երեք ամիս անընդմեջ չի վճարում Կազմակերպության նախագահի կողմից սահմանված անդամավճարը և/կամ արատավորում է հասարակական կազմակերպության հեղինակությունը և/կամ չի մասնակցում հասարակական կազմակերպության զարգացմանն ու ընթացիկ գործերին, Կազմակերպության նախագահի որոշմամբ կարող է հեռացվել անդամությունից: Վերստին նրա անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

1) ընտրել և ընտրվել Կազմակերպության կառավարման մարմիններում,

2) ներկա գտնվել Ժողովին անձամբ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նաև լիազորված անձի միջոցով,

3) ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալու նրանց ընդունած որոշումների պատճենները,

4) վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու Կազմակերպության մարմինների որոշումները: Կազմակերպության անդամի կողմից գործադիր մարմնի որոշումների բողոքարկումն իրականացվում է Ժողովին համապատասխան դիմում ներկայացնելու եղանակով: Դիմումը քննարկում է Ժողովը: Դիմումի քննարկումը կարող է կատարվել նաև հեռակա կարգով,

5) Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, Կազմակերպության մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին 3 տարիներին,

6) իրականացնել օրենքով սահմանված այլ իրավունքներ:

18. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

1) կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները,

2) բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները:

19. Կազմակերպության կանոնադրությունը խախտելու կամ Կազմակերպության կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելու դեպքում Կազմակերպության անդամի նկատմամբ Կազմակերպության նախագահի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողության կամ Կազմակերպության անդամությունից հեռացնելու ձևով:

V .ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

20. 1. Կազմակերպությունն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի՝

1) իր անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող.

2) բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով.

3) ստեղծելու այլ կազմակերպություն կամ լինելու նրա մասնակից.

4) ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ.

5) տեղեկատվություն տարածելու իր գործունեության մասին.

6) կազմակերպելու և անցկացնելու խաղաղ, առանց զենքի հավաքներ.

7) օրենքով սահմանված կարգով ներկայացնելու ու պաշտպանելու իր և իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.

8) համագործակցելու այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծելու Կազմակերպություն կամ անդամակցելու նրանց ստեղծած Կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը.

9) կատարելու օրենքով չարգելված այլ գործողություն:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

21. 1. Կազմակերպությունը պարտավոր է՝

1) վարել իր անդամների և կամավորների հաշվառումը.

2) «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքում ենթարկվել պարտադիր աուդիտի.

3) օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Լիազոր մարմին) պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր.

4) Կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, ժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը.

5) Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել Գործակալություն.

6) իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության գործադիր մարմնի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը.

7) կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

2. Կազմակերպության մարմինները նրա անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն՝ ի շահ Կազմակերպության:

VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

22. Կազմակերպության կառավարման մարմիններն են ժողովը և գործադիր մարմինը՝ Նախագահը:

23. Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ ժողովին:

24. Կազմակերպության հերթական ժողովը գումարվում է հինգ տարին մեկ անգամ: Կազմակերպության հերթական ժողովը հրավիրում է Նախագահը՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն: Նախագահը որոշում է ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան 20 օր առաջ պատվիրված նամակով կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է կազմակերպության անդամներին և կառույցներին:

25. Կազմակերպության արտահերթ Ժողով հրավիրվում է Նախագահի կամ Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ Նախագահի կողմից:

26. Կազմակերպության արտահերթ Ժողովը գումարվում է վերոնշյալ նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում: Արտահերթ Ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին Ժողովի մասնակիցները ծանուցվում են արտահերթ Ժողով անցկացնելու օրվանից առնվազն 5 օր առաջ:

27. Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

1) Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, լրացումների կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,

2) այլ իրավաբանական անձի ստեղծման կամ այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին որոշման ընդունումը,

3) Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների ընդունումը,

4) Կազմակերպության կառուցվածքի հաստատումը,

5) Կազմակերպության Նախագահի ընտրությունը և փոփոխումը,

6) Կազմակերպության Նախագահի վարձատրության կարգի և պայմանների սահմանումը,

7) Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի ընտրությունը, եթե օրենքի համաձայն կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի,

8) Կազմակերպության ռազմավարության հաստատումը, եթե Կազմակերպությունը նախատեսում է ունենալ ռազմավարություն,

9) հինգ տարին մեկ անգամ գործադիր մարմնի կողմից Ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների հաստատումը,

10) Կազմակերպության մարմինների՝ իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը,

11) Կազմակերպության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,

12) Կազմակերպության լուծարման (բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի) մասին որոշման ընդունումը,

13) օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

28. Ժողովն իրավազոր է, եթե գումարվել է օրենքին և Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան, և Ժողովին մասնակցում է Կազմակերպության բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Ժողովի որոշումներն ընդունվում են կազմակերպության Ժողովին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Ժողովի արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահողը և քարտուղարը: Ժողովի արձանագրությունները պահպանվում են 5 տարի:

29. Նախագահն ընտրվում է Ժողովի կողմից հինգ տարի ժամկետով: Կազմակերպության գործադիր մարմինը կազմակերպության նախագահն է: Նախագահը ղեկավարում է կազմակերպության ընթացիկ գործունեությունը և վարում է ժողովի նիստերը:

30. Նախագահի իրավասությունները ներառում են Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման, ինչպես նաև Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:

31. Նախագահը Կազմակերպության կանոնադրությանը և Ժողովի որոշումներին համապատասխան՝

1) ապահովում է Ժողովի որոշումների կատարումը,

2) մինչև հինգ միլիոն դրամ արժողությամբ ցանկացած գույք միանձնյա, իսկ հինգ միլիոնից ավելի արժողությամբ ցանկացած գույքի դեպքում Ժողովի հետ համաձայնեցնելով տնօրինում և կառավարում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից,

3) ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

4) տալիս է լիազորագրեր,

5) բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,

6) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

7) հաստատում է կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը,

8) հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,

9) հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները,

10) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

32. Նախագահն իր լիազորություններն իրականացնելիս Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի:

33. Նախագահը կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Կազմակերպության կանոնադրության, Ժողովի որոշումների կամ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

VIII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

34. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

35. Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:

36. Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

1) կազմակերպության անդամների ներդրումները,

2) Կազմակերպության անդամների վճարումները (անդամավճարները),

3) Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,

4) իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ առևտրային կազմակերպությունից ստացված միջոցները,

5) դրամական մուտքերը պետական բյուջեից,

6) նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները,

7) հանգանակությունները,

8) օրենքով չարգելված այլ միջոցներ:

37. Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար: Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը նրա անդամների միջև չի կարող բաշխվել:

IX. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

38. Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի որոշմամբ կամ դատարանի վճռով:

39. Ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպության լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը Ժողովի որոշմամբ սահմանված կարգով օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:

40. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի վճռով՝ օրենքով սահմանված կարգով:

Սույն կանոնադրությունը կազմված է 13.09.2017 թ. և բաղկացած է 7 թերթից

World Taxpayers Associations

70 members associations from 60 countries on 6 continents

- a united work for lower taxes, less waste, budget discipline, accountable government and taxpayers rights all over the world. ***Asia-Pacific 21 members in bold***

M=Member, O=Observer – currently not a paying member, P=Pending, applying for membership

Taxpayers Ass. of Antigua & Barbuda. P		James Elijah	elijahjames.anu@gmail.com
Armenian NGO of Taxpayers Protection. M	taxpayer.am	Armen Yesoyan	armen@taxpeyer.am
Taxpayers Australia - TPA, M	**taxpayers.com.au**	**Mark Dodds**	Mark@wealthywise.com.au
Australian Taxpayers Alliance. M	**taxpayers.org.au**	**Tim Andrews**	tandrews@taxpayers.org.au
Austrian Taxpayers Association. O	steuerzahler.at	Oliver Ginthör	
Belarusian Union of Taxpayers. O		Anatoly Trukhanovich	adlminsk@anitex.by
Belgium-Dutch VlaNeTax Association. P	vlantax.eu	Kristof Van der Cruysse	
Brazil Institute for Taxpayers Rights. O	edisonsiqueira.com.br	Edison Freitas de Siguei	
British TaxPayers Alliance, M	taxpayersalliance.com	Jonathan Isaby	
Bulgarian Association of Taxpayers. O	wiz.to/bat	Radko Khandjiev	
Canadian Taxpayers Federation. M	taxpayer.com	Troy Lanigan	
Chinese Taxpayers Association	**zgnsrxh.com**	**Fengjiang Liu**	fjliu66@163.com
Beijing Intern Taxation Research Soc. M	**hxnsr.com**	**Sun Xueying**	ykw5912@sina.com
Cameroon Taxpayers Association. O		Jean Jacques Mbia	ac2camer@yahoo.fr
Taxpayers Association of Columbia. O		Pable Trujillo Tealdo	stollbro@latino.net.co
Croatian Taxpayers Association. O	upos.org.yu	Bozidar Jelcic	
Taxpayers Denmark. M	skatteborgerne.dk	Kurt Scheelsbeck	
Estonian Taxpayers Association. M	maksumaksjad.ee	Önneli Varend	
Taxpayers Association of Finland. M	veronmaksajat.fi	Teemu Lehtinen	
French Taxpayers Association. M	contribuables.org	Benoite Taffin	
Ghana Taxpayers Alliance. P		Frank Asiedu Bekoe	tpa.ghana@gmail.com
Taxpayers Union of Georgia. P	**tpu.org.ge**	**Gigla Mikautadze**	gm@tpu.org.ge
German Taxpayers Association. M	steurzahler.de	Reiner Holtznagel	
Bavarian Taxpayers Association. M	steuerzahler-bayern.de	Rolf von Hohenhau	
Grenada Taxpayers. P	grenadataxpayrs.org	Darryl Brathwaite	
Low taxes in Hong Kong–Momentum 107.O	**kidkit.blogspot.com**	**Raymond Ho**	homankit@gmail.com
Hungarian Taxpayers Association. O	taxpayers.hu	Antal Esterházy	
India Taxpayers. P	**indiataxpayer.org**	**Shantha Kumar**	
Indonesian Taxpayers Association. O		**Rm. Hermantho**	hermantho_billad@yahoo.com
Italian Taxpayers Association. O		Armanno Delvai	defra-gra@brenzone.com
Japan Taxpayers Association – JTA. M	**taxpayers.jp/e-index.html**	**Yasuichi**	
Japanese for Tax Reform – JTR. M	**jtr.gr.jp**	**Masaru Uchiyama**	mryou@jtr.gr.jp
Kazakhstan Taxpayers Association. O	**taxpayers.kz**	**Saltanat Elshatova**	saltanat@ank.kz
Taxpayers Kenya. O		Jerry Kiowi	jerrykiowi@yahoo.com
Korea Taxpayers Association. M	**koreatax.org**	**Kim Sunteak**	dd7722@naver.com
Korean Taxpayers Union. O	**ktun.or.kr**	**Rhee Pil-Woo**	ktun@ktun.or.kr
Kyrgyzstan Taxpayers Association. O	**taxpayer@aknet.kg**	**Abdrashitov Zakir**	
Taxpayers Rights & Interest in Latvia. O	nmf.lv	Imants Grikis	
Lithuanian Taxpayers Association. P		Dangoule Prackeniene	danguole@taxpayers.lt
Macedonian Citizens for Tax Reform. O	oi.org.mk	Anita Popovska	
Malaysian Taxpayers Association. O	**freewebs.com/Malaysiataxpayers**	**Jaya Subang**	
Mongolians for Fair Taxes Wise Spending. P	**jargaldefacto.com**	**Tergel Gerelt**	tergel@petrovis.net
Norwegian Taxpayers Association. M	skatt.no	Karine Ugland Virik	
Palestine Taxpayers Association P		Hatem Yousef	hmyousef@yahoo.com
Philippine Taxpayers Union. O	**taxpayersunion.org**	**Vernie Atienza**	ntaxwork@gmail.com
Minimal Government of Philippines. O	**minimalgovernment.net**	**Nonoy Oplas**	nonoy@minimalgovernment.net
Limited Government - Nepal. P		**Krishan Neupane**	ecoplanner@gmail.com
New Zeeland Taxpayers Union P		**Jordan Williams**	Jordan@taxpayers.org.nz
Pakistan Taxpayers Association. P	**taxonline.com.pk**	**Saleem Ahmed**	saleem@finosys.com
Taxpayers Association of Poland. O	podatnicy.org	Mariusz Stodolski	
Portuguese Taxpayers Association. O	ancontribuintes.pt	Magalhaes Pinto	
Romanian Taxpayers Association P		Florin Cojocariu	florin.cojocariu@arsit.org.ro
Russian Taxpayers Union. O		Igor Sobolev	isobolev@list.ru
Russian Taxpayers Association. O		Arkady Murashev	sofia@clcp.ru
Serbian Taxpayers Association. M		Zoran Lukovic, Milan Lajhner	office@patrimons.co.yu
Taxpayer Movement South Africa. P	tpmsa.org.za	Nicolaas van Wyk	
Slovak Taxpayers Association. O	zdps.sk	Jan Oravec	
Swedish Taxpayers Association. M	skattebetalarna.se	Joacim Olsson	
Swiss Taxpayers Association. O		Christoph Oesch	c.oesch@tic.ch
Taxpayers Association of Tanzania. O		Otieno Igogo	oigogo@yahoo.com
Turkish Taxpayers Association. M		Kazım Yilmaz	kyilmaz@ky-ymm.com
Uganda Taxp. & Tax Protection Org. O	taxpayersuganda.org	Joseph Kasibante	
Association of Ukrainian Taxpayers, AUT. M	appu.org.ua	Vasyl Matiychyk	
Ukrainian Taxpayers Ass. in Odessa region.O	asnal.od.ua	Vladimir Mazarak	
National Taxpayers Union – NTU, USA. M	ntu.org	Pete Sepp	
Iowans for Tax Relief, USA. M	taxrelief.org	David Stanley	
Americans for Tax Reform - ATR, USA. M	atr.org	Grover Norquist	
Americans for Fair Taxation, USA. O	fairtax.org	Ken Hoagland	
Citizens for Limited Taxation – CLT, USA. O	cltg.org	Barbara Anderson	
National Tax-Limitation Committee, USA. O		Lew Uhler	ntlc@surewest.net
Taxpayers Associations of Europe	taxpayers-europe.org	Michael Jäger	TAEbdst@AOL.com
World Taxpayers Associations	worldtaxpayers.org	Staffan Wennberg	swennberg@telia.com 19/12 2014



(https://google.com)

HENARAN.am (http://henaran.am)
ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

() ()

Որոնման արդյունքները՝: Արմեն Եսոյան

Պետք է պատասխանատվության ենթարկվեն այն պաշտոնատար անձիք, ովքեր թույլատրել են ապօրինի շինությունները /տեսանյութ/

Մարտի 19, 2019



«Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանություն» ՀԿ ղեկավար Արմեն Եսոյանը ,Հենարան» մամուլի ակումբում լրագրողների հետ հանդիպմանը անդրադառնալով Օպերայի հարակից տարածքում տեղի ունեցող ապամոնտաժման աշխատանքներին նշեց, որ ճիշտ է համարում ապամոնտաժումը, սակայն պետք է պատասխանատվության ենթարկվեն այն պաշտոնատար անձիք, ովքեր թուլատրել են այն շինությունները, իսկ պետությունը պետք է փոխհատուցի տնտեսվարողների գումարը: «ՄԻԵԴ-ում դատական ակտ կա, որտեղ [...]

(http://henaran.am/?post_type=post&p=408977)

Մարզերում չպետք է ավելի նվազ դրույքաչափով պետական տուրքեր վճարեն. փորձագետ /տեսանյութ/

Մարտի 19, 2019

Պետական տուրքի մասին ՀՀ օրենքի փոփոխությունների և լրացումներ կատարելու նախագծի որոշումը, «Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանություն» ՀԿ ղեկավար Արմեն Եսոյանը սխալ է համարում: Նրա կարծիքով, մարզերում տնտեսվարողները չպետք է ավելի նվազ դրույքաչափով պետական տուրքեր վճարեն, քան Երևան քաղաքում: Պետք է բոլորի համար ստեղծվեն հավասար պայմաններ և պետությունը պետք է հիմնավորում ներկայացնի, թե ինչո՞ւ է [...]

(http://henaran.am/?post_type=post&p=408952)

Մարտի 19-ին՝ ժամը 11:00-ին, «Հենարան» մամուլի ակումբում

Մարտի 18, 2019

HENARAN.am
ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

Մարտի 19-ին՝ ժամը 11:00-ին, «Հենարան» մամուլի ակումբում կիյուրընկալվի Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանության ՀԿ ղեկավար Արմեն Եսոյանը՝ ԹԵՄԱ՝ Պետական տուրքի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և

լրացումներ կատարելու մասին նախագիծը. Օպերայի հարակից տարածքում սրճարանների ապամոնտաժում. գործարարների իրավունքների պաշտպանության խնդիրները. քաղաքացիներին նպաստից զրկելու ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությունը.

(http://henaran.am/?post_type=post&p=408809)

Հարկային բարեփոխումնե՞ր, թե՞ հարկատուների համար ավելորդ բեռ /տեսանյութ/

Փետրվարի 6, 2019

«Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանության» ՀԿ նախագահ Արմեն Եսոյանը «Հենարան» մամուլի ակումբում լրագրողների հետ հանդիպմանը խոսելով Հարկային օրենսգրքի նախագծի և տնտեսական միջավայրում սպասվող փոփոխությունների ազդեցության մասին, ասաց՝ պետք չէ շտապել և այդ փոփոխությունները անվանել բարեփոխումներ, քանի որ մենք չգիտենք դրանով օրենսդրությունը բարեփոխվո՞ւմ է, թե՞ ոչ: Եսոյանը արձանագրեց՝ այդ նախագծում կան բազմաթիվ դրույթներ, որոնք, ըստ [...]

(http://henaran.am/?post_type=post&p=402956)

Փետրվարի 6-ին «Հենարան» մամուլի ակումբում

Փետրվարի 5, 2019

HENARAN.am
ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

Փետրվարի 6-ին՝ ժամը 12:00-ին, «Հենարան» մամուլի ակումբում կիյուրընկալվի «Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանության» ՀԿ նախագահ Արմեն Եսոյանը: ԹԵՄԱ՝ Հարկային օրենսգրքի նախագիծը. խնդրահարույց դրույթներն ու տնտեսական միջավայրում սպասվող փոփոխությունների ազդեցությունը Փետրվարի 6-ին՝ ժամը 13:00-ին, «Հենարան» մամուլի ակումբում կիյուրընկալվի կրթության ոլորտի փորձագետ Սերոբ Խաչատրյանը: ԹԵՄԱ՝ պետության կողմից դադարեցվում է բուհերում աշխատող գիտնականների ֆինանսավորումը. դպրոցներում «Հայ [..]

(http://henaran.am/?post_type=post&p=402824)

Ստեղծվել է արդարադատության նախարարին կից հանրային խորհուրդ

Հունիսի 4, 2014



Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1917-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ կետի «դ» և «ժզ» ենթակետերը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանի 2014-ի հունիսի 3-ի հրամանով ստեղծվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին կից հանրային խորհուրդ: Հաստատվել է հանրային խորհրդի կազմը և աշխատակարգը: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄ Արամ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ «Առավոտ» [...]

(http://henaran.am/?post_type=post&p=43285)

Փաստաբանները պահանջ են ներկայացրել իշխանություններին

Հունվարի 17, 2018

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծով սահմանված՝ դատարանի կողմից փաստաբանի նկատմամբ տուգանքի կիրառում նախատեսող իրավակարգավորման դեմ իրենց բողոքի ձայնն են բարձրացնում փաստաբանները: 16.01 2018թ. ՀՀ փաստաբանների պալատում կազմակերպված քննարկման ժամանակ փաստաբանները հայտարարությամբ են հանդես եկել՝ պահանջելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովից և կառավարությունից Նախագծում ներառված՝ փաստաբանի նկատմամբ դատարանի կողմից տուգանքի տեսքով դատական սանկցիա կիրառելու հնարավորությունը [...]